«ԱՂՈՒԱՆԻՑ» ԳՐԵՐ ԵՎ ՈՉ ԹԵ «ԱՂԱՎՆԱԳՐԵՐ»

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Հայ-աղվանական բազմադարյան կապերի մեջ իրենց ուրույն տեղն են գրավել գրական կապերը։ Այդ պատճառով էլ աղվանական գրի և դպրության պատմությանը վերաբերող փաստերը, կարծես պարտադիր կարգով, առնչված են հայ դպրության փաստերի հետ։ Օրինակ, հայ և աղվանից գրերի ստեղծման, դպրոցների հիմնադրման պատմությունը՝ կապված Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, Մինգեչաուրում գտնված աղվանական հավաստի արձանագրությունը՝ հայերեն արձանագրության հետ միասին, աղվանից կորած այբուբենի հայտաբերումը՝ հայկական ձեռագրերում և այլն։

Մեր կարծիքով, փաստերի այս խումբը կարող է հարստանալ նաև վկայությունների մի ուրիշ շարքով, որի ինչ լինելը դեռևս տարակարծությունների առարկա է։ Խոսքը վերաբերում է հայկական ձեռագրերում հայտաբերված մեկ տասնյակից ավելի այն այբուբեններին և առանձին պարբերություններին, որոնք կապվում են աղվանական *գրերի հետ։ Մասնագետներն սկզբում դրանք հենց այդպես էլ դիտեցին, բայց հետագայում փաստարկվեց այն կարծիքը, թե դրանք հայկական ձևափոխված տառեր են և ունեն ծածկագրային նշանակություն։ Հայտնվեցին նաև այլ կարծիքներ։*

Իրերի այս դրության մեջ վերջերս, նոր փաստերով և եղածի ամփոփմամբ, հանդես եկավ պատմաբան, հնագրագետ պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը՝ փորձելով պարզություն մտցնել խնդրի մեջ[1]*։*

Ինչպես անցյալում, այնպես էլ հիմա Ա. Գ. Աբրահամյանը, հենվելով մեծանուն հայագետ Հ. Աճառյանի կարծիքի վրա, գտնում է, որ քննվող տառերը ոչ մի կապ չունեն բուն աղվանական գրերի հետ. Նրանք սոսկ հայկական այբուբենի վրա չափված և հայկական տառաձևերի փոփոխությամբ ստեղծված ծածկագրեր են։ Ինչ վերաբերում է նրանց աղվանական *կոչմանը, ապա դա էլ, ըստ նրա, թյուրիմացություն է՝ առաջացած, իբր թե, նախապես եղած* «աղավնագիր» *կոչումից։*

Մեր որոնումները ցույց են տալիս, որ այս կարծիքը հակասության մեջ է այսօր հրապարակի վրա եղած փաստերի հետ և կարոտ է վերանայման։

Հարցի լուծման համար էական նշանակություն ունի երկու պարագա. ա) քննվող տառերի կոչումը՝ ըստ միջնադարյան աղբյուրների, բ) դրանց կապը՝ բուն աղվանական գրերի հետ:

---

1 *Տե՛ս «Լրաբեր», 1970, № 3, էջ 54—71։*

Ա. Գ. Աբրահամյանը, բնականաբար, ինքն էլ, խնդրի քննության ժամանակ, աշխատել է բացատրել այդ պարագաները։

Առաջինի՝ տառերի կոչման կապակցությամբ, նա ուղղակի մեջ է բերում Հ. Աճառյանի միտքը և խնդիրը համարում լուծված։ Հենց այստեղից էլ սկսվում է սխալը, որովհետև խնդրի լուծման համար կարևորը ոչ թե հեղինակավոր գիտնականի երբևէ հայտնած կարծիքն է, այլ տվյալ դեպքում առկա փաստերի թվաքանակը։ Դատողությամբ Հ. Աճառյանի օգտագործած փաստերին, համոզվում ենք, որ դրանք գալիս են 1900-ական թվականներին անվստահելի ձեռքով ընդօրինակված, ձեռքից-ձեռք անցած և բանավոր աղբյուրներով «ճշտված» մի բաղվածքից։ Այս և այլ պատճառներով Հ. Աճառյանը կարող էր այն ժամանակ հավատ ընծայել անստույգ «աղավնագիր» բառին, իսկ հետո էլ չվերանայել իր կարծիքը։

Այսօր իրերի դրությունը բոլորովին այլ է. հենց իր՝ Ա. Գ. Աբրահամյանի և այլոց ջանքերով գտնված են համապատասխան շատ փաստեր, որոնք համառորեն և հետևողականորեն խոսում են քննվող տառերի աղվանական կոչման մասին։ Այսպես, օրինակ, Հովասափ Սեբաստացու հայտնի հիշատակագրության մեջ այդ տառերը կոչված են «Դիր աղուանից», Մաշտոցի անվան Մատենադարանի № 3124 ձեռագրում համապատասխան այբուբենն առկա է «Այս է Աղուանից այբուբենն» խորագրով, նույն Մատենադարանի № 771 ձեռագրում գտնվող այբուբենը վերնագրված է. «Դիր Աղվանից ըստ այբուբենից» և այլն։

Կան համապատասխան ուրիշ վկայություններ էլ, որոնք, ըստ երևույթին, դեռևս չեն օգտագործված մասնագետների կողմից. Օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 8562 ձեռագրում (թերթ 69ա, ժամանակ ԺԵ—ԺԶ դդ.) ծածկագրային նման այբուբեններից մեկն ունի այսպիսի խորագիր. «Տառր աղուանից, որ է այսպէս», իսկ № 8360 ձեռագրում (թերթ 570բ, ժամանակ 1867 թ.) մի ուրիշ այբուբեն կոչվում է «Յաղագս կերպ գրոց աղուանից»:

Այսպիսին են փաստերը։ Չկա ոչ մի ձեռագիր, ուր այդ այբուբենները և հիշատակարանները կապվեին աղավնի բառի հետ։ Ճիշտ է, կան առանձին դեպքեր, երբ նրանք առհասարակ ոչ մի կոչում չունեն, կամ շփոթված են գաղտնագրերի հետ, կամ էլ մասամբ օգտագործված՝ այլ ծածկագրերի (օրինակ, «Օհանագրերի») մեջ, բայց, որպես կանոն, միջնադարցիները նրանց ճանաչել և օգտագործել են որպես աղվանական գրեր[2]:

Խնդիրը պարզ է. հայկական ձեռագրերից երևան եկած այն գրերը, որոնք կոչված են «աղուանից», ոչ մի կապ չունեն այն իմաստազրկող ու հետնամույծ «աղավնագիր» բառի հետ։ Նրանք այդպես են կոչվել Կովկասի հնագույն բնակիչների՝ աղվանների անունով, ճիշտ այնպես, ինչպես բուն աղվանական այբուբենը № 7117 ձեռագրում ունի խորագիր. «Աղուանից գիրն է»:

Այսպիսով, ճշտված պետք է համարել քննվող գրերի աղվանական կոչման հարցը, իսկ դա ինքնին խիստ ուշագրավ իրողություն է, որը մղում է մտածել այն մասին, թե ինչո՞ւ են այդ գրերը կոչվել «աղուանից»:

Այդ գրերը կարող էին աղվանից կոչվել տարբեր պատճառներով։ Մասնագետներն, անշուշտ, այս պարագան նկատի են առել, բայց որոշակի արդյունք դեռևս չկա։ Այժմ բոլորն էլ ընդունում են այդ տառերի համապատասխանու-

2 Բնականաբար նկատի չունենք այն մասնագետներին, որոնք 1900 թ. սկսած նշված ծածկագրերի համար գործածեցին աղավնագիր բառը։

թյունը հայկական տառերին, ուստի և հաճախ դրանք համարում են սոսկ ձևափոխված հայկական տառերից ստեղծված ծածկագրեր։ Իսկ նրանք (Ա. Շանիձե, Հ. Անասյան և այլք), ովքեր մտածում են այդ տառերի հիմքում աղվանական փոփոխված տառեր (փոքրատառեր) տեսնել, կոնկրետ փաստարկումների չեն դիմել։

Ա. Գ. Աբրահամյանը, որ առհասարակ հայ հնագրության և ծածկագրության ճանաչված մասնագետ է[2] և ավելի շատ է զբաղվել այս հարցով, իր վերջին հոդվածում գրում է. «Համենայն դեպս, մեր կատարած հնագրական ուսումնասիրությունները ոչ մի հիմք չտվեցին այդ երկու բնագրերի (իմա՝ քննվող տառերի և բուն աղվանական տառերի — Ա. Մ.) մեջ որևէ կապ տեսնելու համար. մենք չկարողացանք գտնել որևէ տառանիշ, որը ձևով և հնչունական արժեքով համապատասխան իր երկվորյակը կարողանար գտնել ծածկագիր նշանագրերի մեջ»[4]։

Մեր որոնումները սակայն ցույց են տալիս, որ քննվող տառերի և բուն աղվանական տառերի մեջ կան որոշ անժխտելի ընդհանրություններ, որոնք հիմք են տալիս մտածելու քննվող տառերի՝ աղվանական տառերի կամ էլ գոնե նաև աղվանական տառաձևերի օգտագործմամբ ստեղծված լինելու մասին։ Համեմատության և եզրակացության համար անհամեմատ ցայտուն ընդհանրություններ են ցուցաբերում, օրինակ, «կ», «յ», «տ», «ւ», «փ», «ք» տառերը և այլ տառեր։ Փաստարկումը նպատակասլաց դարձնելու նպատակով վերցնենք որևէ ծածկագիր նախադասություն, որի մեջ լինեն այդ տառերը՝ և՛ ձևի, և՛ հնչունական որոշակի տվյալներով, ապա ծանոթանանք դրանց տարատեսակներին՝ համապատասխան այբուբեններում և նոր միայն փորձենք դրանք գտնել բուն աղվանական տառերի շարքում։

Ծածկագիր նախադասություններից վերցնենք XVI դ. բանաստեղծ Հովասափ Սեբաստացու հանրահայտ ծածկագիր հիշատակագրություններից մեկը՝ «յիշեցէք զմեղապարտ յովասափ սարկաւագն», որի ծածկագիրը կոչված է «գիր աղաւնից»[5].



Այստեղ «կ» տառն օգտագործված է մեկ անգամ («սարկաւագն») և ունի

այսպիսի ձև՝ ։

Այս տառը մոտավորապես նույն ձևն ունի նաև Ա. Գ. Աբրահամյանի հրատարակած 1-ին, 4-րդ, 5-րդ (1-ին, 4-րդ, 5-րդ շարքեր), 7-րդ, 8-րդ նկարներում.

3 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյանի «Հայ գրի և գրչության պատմություն» հատորը, «Дешифровка надписей Кавказских агван» ուսումնասիրությունը, ինչպես նաև առանձին հոդվածները՝ «Էջմիածին», «Լրաբեր», «Պատմա-բանասիրական հանդես» և այլ պարբերականներում։

4 «Լրաբեր», 1970, № 3, էջ 57։

5 Օգտագործում ենք, հիմնականում, Ա. Գ. Աբրահամյանի հրատարակած փաստերը։



Իսկ ահա միևնույն «կ» տառը № 7117 ձեռագրից և վիմագիր արձանագրություններից հայտնի տառերի տախտակում, որ դասավորել ու ճշգրտել է Ա. Գ. Աբրահամյանը[6], ունի հետևյալ ձևերը.



Ինքնին պարզ է, որ քննվող տառի այս բոլոր տարատեսակները պատկանում են աղվանական միևնույն այբուբենին։

Այժմ անցնենք «յ» տառի քննությանը։ Այն Հովասափ Սեբաստացու վերոհիշյալ հիշատակարանում հանդիպում է երկու անգամ («յիշեցէք», «յովասափ»).



Այս տառը քննվող ծածկագրային այբուբեններում հանդիպում է մի քանի ձևով։ Հովասափ Սեբաստացու օգտագործած ձևն առկա է Մաշտոցի անվան Մատենադարանի № 8716, № 6644 և այլ ձեռագրերում, ինչպես նաև Հ. Աճառյանի կազմած ցանկում[7].



Ինչպես երևում է, արտագրության պատճառով, այս ձևից առաջացել են նաև եռանկյունաձև և «պոչավոր» եռանկյունաձև տարատեսակներ, որոնց հանդիպում ենք №№ 8952, 3185, 3124, 771 և այլ ձեռագրերում.

 անցում՝ 

Բուն աղվանական տառերի վերոհիշյալ տախտակում այս տառը ձևով և հնչունային համարժեքով համապատասխանում է «յուդ» և «տետ» տառերին, որոնք ունեն այսպիսի ձևեր.



Այստեղից էլ պարզ երևում է, որ քննվող «յ» տառի ծածկագրային տեսակը բուն աղվանական համապատասխան տառի հարազատ երկվորյակն է։

Այժմ ծանոթանանք «տ» տառին։ Հովասափ Սեբաստացու նշված ծածկագրում այն հանդիպում է մեկ անգամ («մեղապարտ») հետևյալ ձևով. 

6 А. Г. Абрамян, Дешифровка надписей Кавказских агван.
7 Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց գրեր, 1928։

Նույն տառը համապատասխան ձևով հանդես է գալիս №№ 8716, 6644. 8952 և այլ ձեռագրերում, ինչպես նաև Հ. Աճառյանի տպած տախտակում.



Ուշագրավն այն է, որ ուրիշ այբուբենների մեջ այդ նույն տառը երևան է գալիս նաև «8»-ի տեսքով՝ պառկած կամ կանգնած դիրքով։ Այդպիսիք կան, օրինակ, №№ 8952, 3185, 3124, 771, 9758 և ուրիշ ձեռագրերում.



Դժվար չէ նկատել այն կապը, որ կա լատինական «S» տառի և «§»-ի միջև՝ կանգուն կամ պառկած դիրքով։

Ահա այս տառին՝ «8»-ի տեսքով, հանդիպում ենք № 7117 ձեռագրից հայտնի բուն աղվանական այբուբենում, որն ըստ Ա. Գ. Աբրահամյանի, հընչունային առումով, համազոր է լատինական «T» տառին («տոյօ»)։ Ուստի քննվող տառն էլ իր տարատեսակներով բուն աղվանական այբուբենից է։

Առավել ուշագրավ է «ւ» տառի պատմությունը։ Այն Հովասափի Սեբաստացու մոտ («սարկաւաքն») ունի հետևյալ տեսքը.

Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 8716, 6644, 8952, 3185, 3124, 771, 9758 ձեռագրերում և Հ. Աճառյանի տպագրած տախտակում ևս այդ տառը երևան է գալիս համարյա նույն տեսքով.



Բուն աղվանական տառերի մեջ այդ տառի համարժեքն ունի հետևյալ ձևերը. ։ Այստեղ այն կոչված է «ու» և մեկնաբանված «օ»-ի իմաստով. երկու դեպքում էլ այնտեղ առկա է «ւ» հնչյունը (ու, օ—աւ)։

Ոչ մի տարակույս չի կարող լինել այն մասին, որ քննվող ծածկագրերում հանդիպող «ւ» տառը նույնպես բուն աղվանական տառերից է։

Հովասափ Սեբաստացու հիշատակագրության մեջ մեկ անգամ հանդիպող «փ» տառը («յովասափ») ունի այսպիսի ձև. 

Համապատասխան ձևով է այն հանդիպում նաև №№ 8716, 6644 և այլ ձեռագրերում.



Այս տառն էլ գրչական առօրյայում տվել է տարբերակներ, որոնցից են № 3124 և № 771 ձեռագրերում, Հ. Աճառյանի տպագրած աղյուսակում հանդիպող հետեյալ օրինակները. 

Թե այս և թե նախորդ ձևերն իրենց հարազատ օրինակներն ունեն բուն աղվանական այբուբեններում.



Այստեղ էլ ոչ մի խոսք չի կարող լինել նրանց անհարազատության մասին։

Վերջապես, բննենք «Ք» տառը։ Հովասափ Սեբաստացու մոտ մեկ անգամ («սարկաւագն») հանդիպող այդ տառի ձևն է. 

Այն համանման ձևերով երևան է գալիս նաև №№ 6644, 8952, 3124, 771, 9758 և այլ ձեռագրերում, ինչպես նաև Հ. Աճառյանի տպագրած տախտակում.



Բուն աղվանական տառերի մեջ «ք» տառն ունի հետեյալ ձևերը.



Այստեղ էլ հարազատությունն ակներև է։

Այս ցանկը կարելի է մեծացնել. բայց մենք բավարարվենք այսքանով, որովհետև այսքանն էլ հիմք է տալիս պնդելու, թե ՐՆՆվող ծածկագրային այբուբեններն ինչ որ ձևով ու չափով կապված են եղել բուն աղվանական այբուբենի հետ, ուստի և կոչվել են աղվանից գրեր *(ծածկագրի իմաստով)*։

Անշուշտ, մենք չենք մոռանում այն դանազանությունները, որ կան քննվող ծածկագրային այբուբենների և բուն աղվանական տառերի միջև, ինչպես նաև ծածկագրային և հայկական այբուբենների համապատասխանությունները։ Դրանք և հասկանալի են, և բացատրելի։ Առայժմ կարևորը մեզ համար դա չէ, այլ ծածկագրային և բուն աղվանական կոչված այբուբենների մեջ հարազատություն բացահայտելու պարագան։

Այն էլ ավելացնենք, որ փաստերը ցույց են տալիս, թե որքան ճիշտ է եղել Հեթում պատմիչը, երբ իր ժամանակի համար Հայաստանում ճանաչել է երկու այբուբեն. մեկը Արամյան (հայկական), իսկ մյուսը «հալոյեն» (աղվանական)։ Պարզվում է, որ, իրոք, եղել են բուն հայկական այբուբենով գրված ձեռագրերի կողքին նաև աղվանական տառերի օգնությամբ ստեղծված ծածկագրերով գրված հայերեն ձեռագրեր: Այդպիսիներից մեկն է, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 9758 ձեռագրի առաջին մասը: Ուշագրավն այն է, որ այստեղ էլ օգտագործված են, հիմնականում, վերևում քննված

ծածկագիր աղվանական տառերը՝ հայերեն նախադասությունների համար։ Նրանց և մյուս նյութերի ուսումնասիրությունը բացահայտում է նոր օրինաչափություններ, որոնց մասին հանգամանորեն կխոսենք մեկ ուրիշ անգամ։

Վերջացնելուց առաջ հարկ ենք համարում նկատել, որ Ա. Գ. Աբրահամյանի ուսումնասիրությունը, մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ, անկախ իր հիմնական եզրակացության ոչ ճիշտ լինելուց, օգտակար գործ է հայկական ծածկագրերի և աղվանական գրերի հետազոտության առումով։ Ցավալի է, որ հոդվածում տեղ են գտել որոշ շփոթություններ։ Օրինակ, Ա. Գ. Աբրահամյանը, խոսելով Ա. Շանիձեի, Հ. Անասյանի և մեր կարծիքների, ինչպես նաև «հայացած աղվաններ»-ի մասին, հայտնում է շփոթ մտքեր։ Ցավալի է նաև այդ ուսումնասիրության ռուսերեն ամփոփման սխալ ձևակերպված լինելը։ Այդտեղ ուղղակի ասված է. «Долголетние поиски востоковедов, пытавшихся найти письмо Кавказских албан, не увенчались успехом»[8].

Ռուսերենից օգտվողներն այս տողերը կարդալով, պիտի կարծեն, թե Ա. Գ. Աբրահամյանը ժխտում է նաև Մաշտոցի անվան Մատենադարանի № 7117 ձեռագրից, ամերիկարնակ Հ. Քյուրտյանի անձնական մի ուրիշ ձեռագրից, Մինգեչաուրի պեղումներից գտնված աղվանական գրերի աղվանական լինելը։ Մի բան, որն այսօր չի կարող անցնել ոչ ոքի, այդ թվում նաև իր՝ Ա. Գ. Աբրահամյանի մտքով։ Իր հոդվածի մեջ էլ նման ակնարկ չկա. ընդհակառակը, հայերեն խոսքի մեջ նա ունի համապատասխան վերապահություն այդ մասին (էջ 70—71)։ Ինչ վերաբերում է այդ ամփոփման այն տողերին, որտեղ հիշատակվում են քննվող ծածկագրային այբուբենները, ապա, ինչպես վերևում ցույց տվեցինք, այստեղ էլ չէր կարելի գրել, թե «они ничего общего не имеют с подлинным албанским письмом: Այս միտքը ճիշտ է միայն Գանձակի խեցերեկորների թարս դրված տողերի մասին։

Աղվանները, իրո՛ք, եղել են հայ ժողովրդի բազմադարյան դրկիցները, ուստի նրանց այբուբենը՝ լրիվ կամ մասամբ կամ ձևափոխված տառաձևերով հայ մատենագրության մեջ գոյատևել է նաև մի նոր և ուրույն՝ ծածկագրային կյանքով։ Պահպանված հարուստ փաստերը պահանջում են հրաժարվել դրանք աղավնագիր համարելու սխալ մաքից և հանգամանորեն զբաղվել նրանց մեջ թաքնված պատմական ճշմարտությունը գիտականորեն բացահայտելու գործով։

---

8 «Լրաբեր», 1970, № 3, էջ 71։